# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*23 նոյեմբերի 2020թվականի N 99-Ա*

*23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Հաստատել 23.11.2020 թվականի թիվ 11 հերթական նիստի օրակարգը.

1)ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐՈՒՄ, ԿԱՆԱՉԱՊԱՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱԾ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ

ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*23 նոյեմբերի 2020թվականի N 100-Ա*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐՈՒՄ, ԿԱՆԱՉԱՊԱՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող զբոսայգիներում, կանաչապատ և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում, բազմաբնակարան շենքերի բակերում բնակչության ազատ տեղաշարժը, անվտանգ երթևեկությունը խոչընդոտող, մայթերի մակերեսները վնասող ծառերը՝ չոր, ըստ անհրաժեշտության նաև կիսաչոր ծառերը հատելու և սանիտարական էտում կատարելու համար:
2. Աշխատանքների արդյունքում առաջացած վառելափայտը տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին :
3. Աշխատանքներին մասնակից դարձնել համայնքային ոստիկանության և բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ՎՁ տարածքային բաժնի աշխատակիցներին:
4. Առաջարկել համայնքի ղեկավարին վերը նշված աշխատանքներն իրականացնել << Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ

ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*23 նոյեմբերի 2020թվականի N 101-Ն*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛*

1. Տալ համաձայնություն բաժին 11 խումբ 1 դաս 2 համայնքային բյուջեի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 383,0 հազար դրամ պակասեցնել ավելացնելով՝
- 168,0 հազ ՀՀ դրամ բաժին 2 խումբ 5 դաս 1 պաշտպանություն /այլ դասերին չպատկանող/ ոլորտի կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին /հոդված 4267 / կամավորական ջոկատի անդամներին ձմեռային ծածկոցներ, ձեռնոցներ և այլ պարագաներ ձեռք բերելու համար :
- 110,0 հազ ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ հոդվածին /հոդված 4637/ Արցախից ժամանած բնակիչների ժամանակավոր բնակավայրում Ն.Մշեցի 9 հասցեում կացարանի կոյուղագծի կառուցման ֆինանսավորման համար:
- 105,0 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի կապի ծառայություններ հոդվածին, մատուցված կապի ծառայությունների դիմաց ֆինանսավորում տալու համար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼԵՐՅԱ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*